Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղու միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Թեմա՝ Աշակերտական խորհուրդի գործունեությունը հանրակրթական դպրոցում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարինե Զարոյան

Ուսուցիչ՝ Լիաննա Խաչատրյան

2023

Բովանդակություն

Ներածություն.....3

Աշակերտական խորհրդի իրավունքներն ու պարտականությունները...4

Հետազոտական մաս.....15

Եզրակացություններ և գործնական առաջարկություններ 19

Օգտագործված գրականության ցանկ.....21

Ներածություն

Դպրոցում կրթության կարևորագույն տարրերից են համարվում աշակերտական խորհուրդները: Աշակերտական խորհուրդն աշակերտներին հնարավորություն է տալիս արտահայտել սեփական կարծիքը, մտքերը և դրանցով կիսվել ուսուցիչների և տնօրենի հետ: Աշակերտական խորհուրդն անմիջականորեն պետք է կապ ունենա դպրոցում կազմակերպվող համադպրոցական միջոցառումներին: Աշակերտը դպրոցն ավարտելուց հետո պետք է կարողանա հասկանալ ժողովրդական հասարակության նորմերը և կարողանա ակտիվորեն մասնակցել այդ հասարակության զարգացման գործընթացին՝ որպես ՀՀ քաղաքացի : Աշակերտական խորհուրդները դպրոցում քաղաքացիական կրթության կարևորագույն տարրերն են. դրանք հնարավորություն են տալիս ստեղծելու ինքնավար աշակերտական մարմին և ակտիվորեն մասնակցելու դպրոցի ժողովրդավարական կառավարմանը, համայնքի կյանքին: Հայաստանում, թեև օրենսդրությունը լայն իրավասություններ է տալիս աշակերտական խորհուրդներին, այդուհանդերձ, դրանք երբեմն ձևական բնույթ են կրում և սահմանափակվում են մշակութային ու սպորտային միջոցառումների կազմակերպմամբ:

Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են ինչպես որակական, այնպես էլ քանակական մեթոդներ: Իհարկե, որակական մասը գերիշխում է. անցկացվել են հանդիպումներ ու հարցազրույցներ աշակերտների, ուսուցիչների ինչպես նաև ԱԽ անդամների հետ: Աշակերտների հետ զրույցների մեծ մասը եղել է խմբային և առանց տնօրենության կամ ղեկավարության ներկայության՝ անկաշկանդ մթնոլորտ ապահովելու համար, օգտագործել ենք նաև առցանց հանդիպումների և հարցումների մեթոդը:

Աշակերտական խորհրդի գործունեությունը հանրակրթական դպրոցում թեմայի կարևորությունը ինձ համար կայանում է նրանում որ հնարավորություն է տալիս որպեսզի աշակերտների ձայնը դառնա լսելի:

Աշակերտական խորհրդի իրավունքներն ու պարտականությունները

Համաձայն «Հայաստանի հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության աշակերտական խորհրդի մասին ընդհանուր դրույթներն են .

1. Սույն կանոնադրությամբ կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ հաստատություն) աշակերտական ինքնավարության մարմինների ձևավորումը, գործունեությունը, լիազորությունները, ինչպես նաև հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ կապված իրավահարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր հաստատության սովորողների ընդհանուր ժողովը իրավասու է սույն կանոնադրության հիման վրա ստեղծել հաստատության աշակերտական խորհուրդ և ընդունել իր կանոնադրությունը՝ դրան համապատասխան իրականացնելով սովորողների ինքնավարություն:

3. Աշակերտական խորհուրդը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան հաստատության գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ հաստատության կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով:

4. Աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը:

5. Սովորողները կարող են ըստ իրենց նախասիրությունների ստեղծել նաև ակումբներ, միավորումներ, որոնք նույնպես հանդիսանում են

սովորողների ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ և գործում են սույն կանոնադրության 4-րդ կետում շարադրված սկզբունքների համաձայն:

6. Աշակերտական խորհուրդը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրության հիման վրա ստեղծված իր կանոնադրությամբ:

7. Աշակերտական խորհուրդը կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ, որոնց վրա աշակերտական խորհրդի հայերեն անվանումը պարտադիր է:

8. Աշակերտական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների սովորողների ինքնավարության մարմինների ու կազմակերպությունների հետ:

Սովորողների ինքնավարության հիմնական խնդիրներն են՝

- համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը,
- ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստելը,
- հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը,
- սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը օժանդակելը,
- սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը,
- հաստատության սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը,
- սովորողների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին

աջակցելը և սովորողների նախաձեռնությունների ապահովմանը օժանդակելը,

- հաստատությունում սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն օժանդակելը,
- երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը:

Սովորողների ինքնավարության բարձրագույն մարմնի (սովորողների ընդհանուր ժողով) հիմնական գործառույթներն են.

- Հաստատության սովորողների ինքնավարության բարձրագույն մարմինը հաստատության 6-12-րդ (հիմնական դպրոցի համար՝ 6-9-րդ, ավագ դպրոցի համար՝ 10-12-րդ) դասարանների սովորողների ընդհանուր ժողովն է: Հաստատությունում աշակերտական խորհրդի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, ընդհանուր ժողովին կարող են մասնակցել նաև 5-րդ դասարանի սովորողները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:
- Սովորողների առաջին ընդհանուր ժողովը հրավիրվում է հաստատության տնօրենի կողմից՝ սեպտեմբեր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում:
- Հաստատության սովորողների առաջին ընդհանուր ժողովը որոշում է կայացնում՝

✓ հաստատությունում աշակերտական խորհուրդ՝ սովորողների ինքնավարության գործադիր մարմին ձևավորելու մասին,

✓ սույն կանոնադրության հիման վրա հաստատության աշակերտական խորհրդի կանոնադրությունը և ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ,

✓ աշակերտական խորհրդի թվակազմը հաստատելու վերաբերյալ,

✓)աշակերտական խորհրդի ձևավորման աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կազմը (այսուհետ՝ ընտրական հանձնախումբ) հաստատելու վերաբերյալ:

- Հաստատության սովորողների ընդհանուր ժողովը՝

- ✓ հաստատում է սովորողների ինքնավարության 6 մարմնի կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ,
- ✓ ի գիտություն է ընդունում հաստատության գործունեության վերաբերյալ տնօրենի ամենամյա ծրագրային ուղերձը,
- ✓ քննարկում է աշակերտական խորհրդի և նրա նախագահի տարեկան հաշվետվությունները և բաց քվեարկության միջոցով տալիս է համապատասխան գնահատական (անբավարար, բավարար, լավ),
- ✓ լսում է հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի կամ սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի հաղորդումը՝ ուսումնական տարվա ընթացքում արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման մասին,
- ✓ քննարկում է սույն կանոնադրությամբ իր լիազորությունների սահմաններում նախատեսված այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է աշակերտական խորհրդի համար:
- ➢ Սովորողների ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան երկու անգամից ոչ պակաս՝ աշակերտական խորհրդի կողմից: Արտահերթ ժողով կարող է հրավիրվել աշակերտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով կամ հաստատության տնօրենի նախաձեռնությամբ:

Աշակերտական խորհրդի ընտրական հանձնախմբի գործունեությունը.

- ➢ Աշակերտական ինքնավարության մարմինների ընտրությունների կազմակերպման նպատակով ձևավորվում է ընտրական հանձնախումբ՝ յուրաքանչյուր դասարանի խորհրդի կազմում չընդգրկված մեկական սովորողներից:
- ➢ Ընտրական հանձնախումբն իր առաջին նիստում ընտրում է նախագահ: Նախագահն ընտրվում է ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ձևը որոշում է հանձնախումբը:
- ➢ Ընտրական հանձնախումբը լիազորություններն իրականացնելիս համագործակցում է հաստատության խորհրդի,

մանկավարժական, ծնողական խորհուրդների և տնօրինության հետ:

- Ընտրական հանձնախումբը՝
- ✓ կազմակերպում է դասարանական խորհուրդների ընտրությունները և հաստատում դասարանական խորհուրդների կազմերը,
- ✓ դասարանական խորհուրդների ընտրությունների արդյունքների հիման վրա հաստատում է հաստատության աշակերտական խորհրդի կազմը (այսուհետ՝ աշակերտական խորհուրդ),
- ✓ կազմակերպում է աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունները:

Սովորողների ինքնավարության դասարանական մարմինները.

- Հաստատությունում սովորողների ինքնավարության սկզբնական կառուցվածքային օղակը դասարանական ընդհանուր ժողովն է, որը ձևավորում է դասարանական խորհուրդ: Խորհուրդը կազմվում է տվյալ դասարանից ընտրված երեքից հինգ սովորողներից, մեկ տարի լիազորությունների ժամկետով: Մինչև երեք սովորողների համակազմ ունեցող դասարանի բոլոր սովորողները համարվում են աշակերտական խորհրդի անդամներ:
- Դասարանական ընդհանուր ժողովում առավել ձայներ հավաքած դասարանական խորհրդի անդամը համարվում է դասարանական խորհրդի նախագահ: Առավելագույն հավասար ձայներ ստացած խորհրդի անդամների դեպքում՝ խորհդի նախագահը որոշվում է ընտրական հանձնաժողովի կողմից վիճակահանությամբ:
- Դասարանական ընդհանուր ժողովը հրավիրվում է ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ՝ դասղեկի, դասարանական խորհրդի, խորհրդի նախագահի, դասարանի աշակերտների 1/3-ի նախաձեռնությամբ:
- Դասարանական ընդհանուր ժողովը հաստատում է դասարանական խորհրդի և նրա նախագահի տարեկան հաշվետվությունը:

Դասարանական խորհրդի գործունեությունը.

- նախաձեռնում և դասարանի ղեկավարի (դասղեկ) հետ կազմակերպում է դասարանի սովորողների առաջադիմությանը,

առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլն,

- համագործակցում է աշակերտական խորհրդի հանձնախմբերի հետ՝ դասարանական և դպրոցական միջոցառումների կազմակերպման համար,
- իրականացնում է սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:
- Դասարանական խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել այլ դասարան կամ դպրոց տեղափոխվելու, կամ նրան անվստահություն հայտնելու դեպքում՝ դասարանական ժողովի մասնակիցների 2/3-ի որոշմամբ:
- Դասարանական խորհրդի նախագահին անվստահություն հայտնելու դեպքում դասարանի ընդհանուր ժողովը լսում է նրա բացատրությունը:
- Դասարանական խորհրդի նախագահին անվստահություն հայտնելու հարցը քննարկման է դրվում՝ կանոնադրությամբ և իր կանոնադրությամբ սահմանված լիազորությունները գերազանցելու կամ պարտականությունները չկատարելու դեպքերում:

Սովորողների ինքնավարության գործադիր մարմնի՝ աշակերտական խորհրդի գործունեությունը.

- Աշակերտական խորհուրդը ձևավորվում է հաստատության 6-12-րդ (հիմնական դպրոցի համար՝ 6-9-րդ, ավագ դպրոցի համար՝ 10-12-րդ) դասարանների դասարանական ժողովներում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցիչներից, դասարանական ժողովներից հետո՝ 10-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ ուստարվա սեպտեմբերի 20-ը:
- Աշակերտական խորհրդի նիստին, խորհրդակցական ձայնի իրավունքով, կարող են մասնակցել դասղեկները:
- Աշակերտական խորհրդի նախագահին ընտրվում է հաստատության սովորողների կողմից՝ փակ, գաղտնի քվեարկության միջոցով, ձայների պարզ մեծամասնությամբ,

սակայն ոչ պակաս, քան սովորողների ընդհանուր թվի կեսից ավելիի մասնակցությամբ:

- Աշակերտական խորհրդի նախագահի թեկնածուներ առաջադրվում են միայն աշակերտական խորհրդի անդամներից՝ տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-25-ն ընկած ժամանակահատվածում: Թեկնածուները, համաձայն ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցի, ներկայացնում են հաստատության աշակերտական խորհրդի գործունեության իրենց ծրագրերը:
- Ընտրության արդյունքները քվեարկությունից անմիջապես հետո ամփոփում և հայտարարում է ընտրական հանձնախումբը:
- Աշակերտական խորհրդի նախագահն ընտրվում է մեկ ուսումնական տարի ժամկետով (նույն անձը կարող է վերընտրվել, սակայն ոչ ավելի, քան երկու անգամ):
- Աշակերտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստեր հրավիրվում են աշակերտական խորհրդի նախագահի, տնօրենի, տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի նախաձեռնությամբ և (կամ) աշակերտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով և հաստատության սովորողների ընդհանուր ժողովի որոշմամբ:
- Քվեարակության անցկացման կարգը (փակ կամ բաց) որոշում է աշակերտական խորհուրդը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար թվով ձայների դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:
- Աշակերտական խորհրդի նիստերը արձանագրվում և հրապարակվում են աշակերտական խորհրդի որոշման համաձայն:
- Աշակերտական խորհրդի գործունեությունը սույն կանոնադրության համաձայն կազմակերպելու նպատակով ստեղծվում են համապատասխան մասնագիտացված հանձնախմբեր, որոնք իրենց կազմից ընտրում են հանձնախմբի համակարգող:
- Մասնագիտացված հանձնախմբերը կազմավորվում են ըստ գործունեության բնագավառների (ուսումնադաստիարակչական,

ռազմամարզական, առողջապահական, սոցիալական, մշակութային, կարգապահական, իրավական, տեղեկատվական և այլն):

- Մասնագիտացված հանձնախմբերի պարտականություններն ու լիազորությունները սահմանվում են աշակերտական խորհրդի աշակերտական խորհրդի առաջարկությամբ կարող են ընդգրկվել նաև ուսուցիչներ, ծնողներ և համապատասխան բնագավառների մասնագետներ:

Աշակերտական խորհրդի իրավասությունը և պատասխանատվությունը.

- Աշակերտական խորհուրդը՝
- ✓ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է հաստատության կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին՝ սովորողներին վերաբերող ուսուցման բովանդակության, գիտելիքների յուրացման որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկումներին,
- ✓ կարծիք է ներկայացնում հաստատության մանկավարժական խորհրդին՝ առանձին դեպքերում հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար սովորողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ,
- ✓ կարող է ստեղծել մանկապատանեկան ակումբներ և աջակցում է դրանց աշխատանքների կազմակերպմանը,
- ✓ մասնակցում է համայնքին օժանդակող ծրագրերի իրականացմանը,
- ✓ արձագանքում և իր իրավասությունների սահմաններում ընթացք է տալիս սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին ու դիմումներին,
- ✓ աշխատանքներ է տանում սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ,
- ✓ աջակցում է հաստատության կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և տնօրինության

կողմից սովորողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանը. իրականացնում է դպրոցի և սույն կանոնադրություններից բխող այլ լիազորություններ:

- Աշակերտական խորհուրդը առաջարկություններ է ներկայացնում հաստատության տնօրինությանը՝
  - ✓ հաստատության ներքին կարգապահական կանոնների,
  - ✓ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման,
  - ✓ հաստատության և ընտանիքի կապի ամրապնդման,
  - ✓ դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման վերաբերյալ:
- Աշակերտական խորհուրդը հաստատության կառավարման խորհրդի և խորհրդակցական մյուս մարմինների հետ համատեղ՝
  - ✓ մասնակցում է սովորողների արտաուսումնական, արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը,
  - ✓ մասնակցում է ծնողազուրկ և օգնության կարիք ունեցող երեխաների հաշվառմանը՝ նրանց նյութական և այլ օգնություն ցուցաբերելու աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացում,
  - ✓ պաշտպանում է երեխայի իրավունքները հաստատությունում,
  - ✓ նպաստում է դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը,
  - ✓ համագործակցում է դասղեկների հետ՝ դասղեկի աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումներն իրականացնելու համար:

Աշակերտական խորհրդի նախագահի լիազորությունները.

- ղեկավարում է խորհրդի գործունեությունը՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում,
- հանդիսանում է սովորողների ներկայացուցիչը հաստատության մյուս մարմինների հետ փոխհարաբերություններում,
- մասնակցում է հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների, դպրոցի կառավարման խորհրդի, տնօրինության աշխատանքներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

- տարեկան հաշվետվություն է ներկայացնում սովորողների ընդհանուր ժողովին՝ աշակերտական խորհրդի և իր կատարած աշխատանքների մասին,
- համակարգում է դասարանական խորհուրդների և հանձնախմբերի գործունեությունը, ապահովում է դասարանական խորհուրդների և հանձնախմբերի միջև համագործակցությունը,
- սույն կանոնադրությանը համապատասխան՝ իրականացնում է այլ լիազորություններ,
- Աշակերտական խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են այլ հաստատություն տեղափոխվելու, հրաժարական տալու, ինչպես նաև նրան անվստահություն հայտնելու դեպքերում: Անվստահություն հայտնելու նախաձեռնությունը կարող է քննարկվել, եթե այն նախաձեռնվում է ընտրության իրավունք ունեցող սովորողների 1/3-ի կողմից:
- Աշակերտական խորհրդի նախագահի անվստահության հարցը քննարկվում է սովորողների ընդհանուր ժողովում, որտեղ լսվում է նրա (նախագահի) կողմից բերվող մեկնաբանությունը հարցի կապակցությամբ:
- Աշակերտական խորհրդի նախագահի անվստահությունը ընդունվում է՝
  - ✓ սույն և իր կանոնադրությամբ սահմանված լիազորությունների գերազանցման դեպքում կամ իր վրա դրված պարտականությունները անհարգելի պատճառներով չկատարելու համար,
  - ✓ Անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշումը ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել ընտրության իրավունք ունեցող սովորողների 2/3-ը:

Եզրափակիչ դրույթներ.

- Աշակերտական խորհրդի անդամները, աշակերտական խորհրդի նախագահը, հանձնախմբերի անդամները, դասարանները ներկայացնող խորհուրդների անդամները իրենց հաստատության, դասարանի, սովորողների ինքնավարության մարմնի անունից

հանդես գալիս պետք է պաշտպանեն իրենց հաստատության և ինքնավարության մարմնի իրավունքներն ու օրինական շահերը:

- Խորհուրդը հիմնականում առաջնորդվում է կանոնադրությամբ: Աշակերտական խորհուրդների կազմը ընտրվում է ամեն տարի՝ աշակերտների կողմից. թեկնածուները նույնպես առաջադրվում են աշակերտների միջից: Աշակերտական խորհուրդն աշակերտներին օգնում է ուսուցիչների, տնօրենի հետ կիսվել իրենց կարծիքով, հետաքրքրություններով ու մտքերով: Աշակերտական խորհուրդն օգնում է կազմակերպել համադպրոցական միջոցառումներ, կատարել դպրոցական բարեփոխումներ, բարձրաձայնել դպրոցում ծագող խնդիրների մասին և լուծման եղանակներ առաջարկել, իրականացնել հետաքրքիր նախաձեռնություններ: Որոշումներն ընդունվում են բոլոր աշակերտների կողմից՝ ժողովրդավարական եղանակով:

Հետազոտական մաս

Ցավոք, աշակերտական խորհրդի մասին օրենքները երբեմն մնում են թղթի վրա և աշակերտական խորհուրդը շատ դպրոցներում կրում է ձևական բնույթ և չի գործում՝ հատկապես գյուղական համայնքներում: Աշակերտները շատ հաճախ չգիտեն, որ գոյություն ունի աշակերտական խորհուրդ, որ նրանց մասնակցությունը դպրոցի կյանքում միայն սովորելով չի սահմանափակվում և որ նրանց կարծիքը և առաջարկությունները նույնպես շատ կարևոր են և պետք է լսելի լինեն ուսուցիչների ու տնօրենի կողմից: Եթե մենք ուզում ենք ամուր պետականություն ունենալ, պետք է սկսենք բարելավել մեր կրթական համակարգը: Ովքե՞ր են մեր այսօրվա դպրոցի շրջանավարտները, ի՞նչ արժեքների կրող են նրանք, որքանո՞վ են նրանք գիտակից քաղաքացիներ: Աշակերտական խորհուրդն օգնում է աշակերտներին ներգրավել դպրոցի խնդիրների լուծման մեջ և դրանով մեծացնում աշակերտների սերը և պատասխանատվությունը դպրոցի, իսկ հետո՝ համայնքի և պետության հանդեպ: Աշակերտական խորհուրդները լուրջ ինստիտուտներ են, որոնց դերը, ցավոք, անտեսվում է դպրոցների տնօրինության կողմից: Ուժեղ և ակտիվ աշակերտական խորհուրդ ունենալը պետք է նպատակ լինի յուրաքանչյուր դպրոցի համար: Այստեղ են ձևավորվում մեր ապագա քաղաքացիները: Որքանով նրանք ապագայում կլինեն գիտակից քաղաքացի, կախված է հենց դպրոցից, քանի որ այս միջավայրում են նրանք դաստիարակվում և կրթվում:

Ցավոք երբեմն հենց տնօրեններն ու ուսուցիչները չգիտեն, թե որն է աշակերտական խորհրդի գլխավոր նպատակը և գործունեության իմաստը: Այդ պատճառով դրանք շատ դպրոցներում ունեն ձևական

բնույթ: Հարկավոր է տեղեկատվական և բացատրական աշխատանք տանել դպրոցների տնօրենների և ուսուցիչների հետ: Նաև պետք է խրախուսել դպրոցներին, որտեղ ակտիվ գործում են աշակերտական խորհուրդները:

Իրականում, դպրոցական ներքին շատ խնդիրներ կարող են լուծվել աշակերտական խորհուրդների ակտիվ մասնակցությամբ: Շատ անգամ երեխաներն այնպիսի հարցեր են բարձրացնում, որոնք մեծերը նույնիսկ չեն էլ նկատում, նաև ավելի լավ մոտեցումներ և լուծումներ են առաջարկում որոշ խնդիրների վերաբերյալ: Պետք է բոլորս գիտակցենք, որ լավ կրթության համար անհրաժեշտ է ուսուցիչների և աշակերտների, ինչպես նաև ծնողների սերտ համագործակցությունը և ակտիվ մասնակցությունը դպրոցական կյանքին: Պետությունը պետք է խրախուսի այդ գործընթացը:

Հետազոտություն աշակերտների շրջանում և արդյունքների վերլուծություն

Հետազությունը անցկացրել ենք տարբեր դպրոցների 6-12-րդ դասարանների 50 աշակերտների շրջանում: Աշակերտների հետ անցկացրել ենք մասնավոր զրույցներ այն մասին, թե արդյո՞ք իրենց ձայնը լսելի է դպրոցի աշակերտական խորհրդի գործունեության ընթացքում: Զրույցին մասնակցած աշակերտների 72%-ը (1-ին խումբ) պատասխանեցին, որ ոչ մեր ձայնը լսելի չէ, իսկ 28%-ը (2-րդ խումբ)՝ հակառակը:



Աղյուսակ 1.

Այսպիսով, հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտները այնքան էլ ակտիվ ներգրավված չեն աշակերտական խորհուրդների գործունեությանը և այնքան էլ լավ տեղեկացված չեն, դրա գործունեության էությանը:

Հետազոտություն ուսուցիչների շրջանում և արդյունքների վերլուծություն

Հետազությունը անցկացրել ենք տարբեր դպրոցների 6-12-րդ դասարաններում դասավանդող 80 ուսուցչների շրջանում: Հետազոտության նպատակն էր պարզել, թե իրենց դպրոցներում որքան հաճախ են հրավիրվում աշակերտական խորհրդի ժողով: ՈՒսումնասիրման նպատակով իրականացրել ենք հարցաթերթիկային հարցում, հարցվող ուսուցիչների 60 տոկոսը պատասխանել է, որ հազվադեպ է հրավիրվում աշակերտական խորհրդի ժողովներ, իսկ ուսուցիչների 40 տոկոսը պատասխանել է, որ շատ հաճախ է հրավիրվում:



Աղյուսակ 2.

Երկրորդ հարցին, թե ինչպես են գնահատում աշակերտական խորհրդի գործունեությունը, ուսուցիչների 12 տոկոսը գնահատել է գերազանց, 55 տոկոսը՝ լավ, 13 տոկոսը՝ բավարար, իսկ 20 տոկոսը դժվարացել է գնահատել:



Աղյուսակ3.

Երրորդ հարցին, թե ինչպիսի դժվարություններ են ունենում աշակերտական խորհուրդների լիազորությունների կատարման ընթացքում 13%-ը նշել են, որ դժվարություններ չեն ունենում, 17%-ը պատասխանել են, որ դժվարություններ ունենում են այն ժամանակ, երբ նյութին այդքան էլ լավ չեն տիրապետում, 25%-ը պատասխանել են, որ դժվարություններ ունենում են այն ժամանակ, երբ նախապես չեն լսել աշակերտներին ու ծանոթ չեն խնդրին, 20%- ասել են, որ դժվարություններ են այն ժամանակ, երբ չեն կարողանում խնդրի հիմնականն ու երկրորդականը տարանջատել միմյանցից և 20%- ասել են, որ դժվարություններ են ունենում, երբ չեն կարողանում խնդրի լուծման համար ճիշտ մեթոդ ընտրել: Հարցումների պատասխանները և՛ս մեկ անգամ փաստում են, որ ճիշտ համագործակցությունը հաջողված արդյունքի գրավականն է:



Աղյուսակ 4.

Եզրակացություններ, առաջարկություններ

Ուսումնասիրության հիմնական հարցին պատասխանելով պետք է եզրակացնենք, որ թեև կան հրաշալիի պատանիներ, լավ աշխատանք տանող ԱԽ-ներ, սակայն ընդհանուր առմամբ աշակերտական խորհուրդները արդյունավետ չեն գործում: Արդյունավետությունը բարձրացնելու համար ներկայացրել ենք մի քանի գործնական առաջարկություններ, որոնք ներկայացրել ենք հետազոտական աշխատաքում: ԱԽ-ների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար ներկայացնում ենք մի քանի գործնական առաջարկություններ.

1. ԱԽ հաշվետվությունները դարձնել կիսամյակային: Դրանք պետք է հանձնվեն ոչ միայն տնօրենին, այլ փակցվեն դպրոցի պատին և դրվեն դպրոցի ինտերնետային կայքում:

2. Անցկացնել աշակերտական խորհուրդների տարեկան համագումարներ, ամառային ճամբարներ փորձի փոխանակման ու նոր գաղափարների համար:

3. Ավելի աշխուժացնել տարրական դասարանների երեխաների խնդիրներով զբաղվող ԱԽ հանձնաժողովների աշխատանքը: Հնարավորինս ներգրավվել ցածր դասարանների աշակերտներին (1-5-րդ դասարաններ):

4. Սահմանել դպրոցի կառավարման խորհրդի նիստների նվազագույն թիվը, որոնց ԱԽ-ն պիտի մասնակցի:

5. Երկու տարվա ընթացքում փորձարկել ԱԽ ակումբներ ձևավորելու տարբերակը տվյալ համայնքի դպրոցների համար: Դպրոցական ԱԽ ներկայացուցիչները ձեւավորում են համայնքային աշակերտական ակումբ, որը համայնքի մակարդակով է միջոցառումներ իրականացնում:

6. Ավելի մեծ տեղ տալ հասարակագիտություն առարկայի գործնական աշխատանքներին, որոնք կբարձրացնեն աշակերտների քաղաքացիական գիտակցությունը, հնարավորություն կտան փորձ ձեռք կբերել քաղաքացիականհասարակական ակտիվության ասպարեզում;

7. Դպրոցներում հատկացնել թեկուզ փոքր, բայց սեփական տարածք ու տեխնիկա ԱԽ-ի աշխատանքի համար:

8. Ուսուցիչների եւ տնօրենների վերապատրաստման դասընթացներում շեշտել դպրոցական ինքնավար խորհուրդների, դպրոցների ժողովրդավարական կառավարման թեմաները:

9. Խրախուսական մեթոդներ մշակել ոչ միայն ԱԽ-ների, այլև դպրոցների տնօրենների համար, ովքերը ավելի շահագրգռված կլինեն աջակցելու ԱԽ- տարրական դասարանների երեխաների խնդիրներով զբաղվող ԱԽ հանձնաժողովների աշխատանքը: Հնարավորինս ներգրավվել ցածր դասարանների աշակերտներին (1-5-րդ դասարաններ):

10. Մշակել հանրակրթության շրջանակում քաղաքացիական կրթության հայեցակարգ՝ մատնանշելով գերակա ուղղություններն ու իրականացվելիք միջոցառումների ժամանակացույցը:

11. Կիրառել միջազգային փորձը ԱԽի՝ համայնքի հետ կապող օղակ լինելու: Սա հնարավորություն կտա աշակերտներին ներդպրոցական խնդիրներից վեր բարձրանալ ու դպրոցական տարիքից ներգրավվել համայնքային նշանակության ձեռնարկներում:

12. ԱԽ-ի կառավարման համակարգը դարձնել խորհրդարանական: Դա մեծապես կպակասեցնի տնօրենության կամ ուսուցիչների ներգրավվածությունը, ազդեցությունը աշակերտական խորհրդի ղեկավարի ընտրություններին, քանի որ կլինեն տարբեր հանձնախմբեր իրենց պատասխանատուներով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վիգեն Շիրվանյան, Աշակերտական խորհուրդների գործունեությունը Հայաստանում, Երեւան,2013:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docID=69283
3. https://escs.am/am/static/counsil
4. https://lyceefrancais.am/hy/ashakertneri_xorhurd/
5. http://school78.safe.am/